Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Ս. Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***1. Գործուղվողի անունը, ազգանունը***.

Արսեն Նիկոյան

Մերի Հարությունյան

***2. Զբաղեցրած պաշտոնը***

Միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ

Ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

***3. Գործուղման վայրը և ժամկետները***

Այցելություն Քենիայի Հանրապետության Նայրոբի քաղաք՝ 2023թ. նոյեմբերի 9-ից նոյեմբերի 21-ը

***4. Հրավիրող կողմը***

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (UNEP)

***5. Գործուղման նպատակը***

Մասնակցություն պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված

միջկառավարական բանակցային կոմիտեի /ՄԲԿ/ 3-րդ նիստին (2023թ. նոյեմբերի 11-ից նոյեմբերի 19-ը)

***6. Քննարկված թեմաները***

ՄԲԿ 3-րդ նիստին ընդառաջ ս/թ նոյեմբերի 11-ին և 12-ին կայացել են ՄԲԿ նախապատրաստական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի հանդիպումները: Նախապատրաստական հանդիպման ընթացքում քննարկվել է ՄԲԿ քարտուղարության կողմից մշակված ամփոփ զեկույցը, որում ներառված են ՄԲԿ անդամների առաջարկությունների հիման վրա կազմված ապագա համաձայնագրի որոշ գլուխներ /նպատակները, սկզբունքները, սահմանումները, ինստիտուցիոնալ կարգավորումները և այլն/:

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի հանդիպման ընթացքում տարածաշրջանի երկրները փոխանակել են տեսակետներ՝ զրոյական նախագծի և ամփոփ հաշվետվության վերաբերյալ:

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի Էստոնացի համանախագահի այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ խմբի կողմից քննարկվեց նաև թափուր մնացած տվյալ համանախագահողի փոխարինման հետ կապված հարցը: Խմբի կողմից առաջարկվեց, որպեսզի համանախագահողի թափուր հաստիքը զբաղեցնի Էստոնիայի մեկ այլ ներկայացուցչի կողմից և ներկայացվեց Էստոնայի կլիմայի նախարարության անդրսահմանային ջրերի գծով հատուկ բանագնաց պրն. Հարրի Լիիվի թեկնածությունը, որի մասով խմբի ներկայացուցիչների կողմից առարկություններ չեղան և էստոնացի համանախագաղողի թեկնածությունը խմբի կողմից ներկայացվեց ՄԲԿ քարտուղարություն: Վերջինիս թեկնածությունը հաստատվեց ՄԲԿ 3-րդ նիստի վերջին օրը կայացած լիագումար նիստի ընթացքում:

ՄԲԿ 3-րդ նիստը մեկնարկել է ս/թ նոյեմբերի 13-ից, որի ընթացքում քննարկված հիմնական թեմաներն են՝

- ✓ պլաստիկ աղտոտվածության վերաբերյալ միջազգային համաձայնագրի զրոյական նախագծի հնարավոր նպատակների և

կարգավորման շրջանակի ուրվագծումը (այդ թվում՝ պլաստիկ աղտոտման նվազեցում, մարդու առողջության և շրջակա միջավայրը պլաստիկ աղտոտման անբարենպաստ հետևանքներից պաշտպանություն՝ պլաստիկի կյանքի ամբողջ ցիկլի ընթացքում),

- ✓ հիմնական պարտավորությունների տարբերակների քննարկում,
- ✓ ֆինանսական և տեխնիկական օժանդակության տրամադրման մեխանիզմների ուրվագծում,
- ✓ հետազոտությունների և վերլուծությունների իրականացում և այլն:

ՄԲԿ 3-րդ նիստին մասնակցել են 150-ից ավել երկրների, 30-ից ավել միջազգային կազմակերպությունների և 100-ից ավել ՀԿ-ների ներկայացուցիչներ:

## *7. Հանդիպումները, ելույթները*

Հայկական պատվիրակությունը ակտիվորեն մասնակցել է նիստի օրակարգով նախատեսված քննարկումներին, մասնավորապես պատվիրակության կողմից կարևորվել և արտահայտվել են հետևյալ տեսակետները.

- ✓ Գործընթացի շրջանակներում մշակված պլաստիկ աղտոտվածության վերաբերյալ միջազգային համաձայնագրի զրոյական նախագիծը հանդիսանում է արդյունավետ բանակցություններ իրականացնելու մեկնարկային կետ,
- ✓ Ապագա համաձայնագիրը /ԱՀ/ պետք է կանոնակարգի պլաստիկի կյանքի ամբողջ ցիկլը և պլաստիկ թափոնների կայուն կառավարումը,
- ✓ Անցումային տնտեսությամբ երկրները պետք է ունենան ԱՀ իրականացման, կարողությունների զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման համար ֆինանսական միջոցների հասանելություն,
- ✓ Կարևորվել է շրջակա միավայրի բոլոր բաղադրիչներում /ջուր, հող, կենսաբազմազանություն, օդ, էկոհամակարգեր/ գիտական և տեխնիկական նորարարությունների իրականացումը՝ ուղղված պլաստիկ աղտոտման կանխարգելմանը և նվազեցմանը,
- ✓ ԱՀ նպատակների իրականացման համար նախընտրելի է նպատակային նոր բազմակողմ հիմնադրամի ստեղծումը,

- ✓ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (EPR) համակարգի դիտարկումը որպես ԱՀ իրագործման հիմնական գործիք:

***8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը, առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները***

ՄԲԿ նիստի շրջանակներում ձևավորված 3 խմբերի կողմից մշակվել են առաջարկությունների փաթեթներ՝ գրոյական նախագծի առանձին բաժինների վերաբերյալ: Որպես հանդիպման հիմնական արդյունք ակնկալվում է պլաստիկ աղտոտվածության վերաբերյալ միջազգային համաձայնագրի նախնական տարբերակի մշակումը և հետագա աշխատանքների ուրվագծումը՝ 2024 թվականի ապրիլին կայանալիք ՄԲԿ 4-րդ նիստին ընդառաջ:

Միջազգային համագործակցության
վարչության պետի տեղակալ Արսեն Նիկոյան

Ռազմավարական քաղաքականության
վարչության գլխավոր մասնագետ

Մերի Հարությունյան